ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,
պատմական գիտությունների դոկտոր
Alkhar39@mail.ru

ԶՄՅՈՒՌՆԱՀԱՅԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ-ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XIX Դ. 40-ԱԿԱՆ ԹԹ.)

Բանալի բառեր՝ Զմյուռնիա, «Սյունյաց ընկերություն», Էգեյանի առափնյակ, «Արշալոյս Արարատեան» լրագիր, Ապրոյան գերդաստան, տրիեստաբնակ բարեգործներ, Յուսուֆյաններ:

Առաջաբան

Իր գործունեության լայն ընդգրկումներով ու դրանց համարժեք ծրագրով «Սյունյաց ընկերությունն» աննախընթաց երևույթ էր ժամանակի գաղթօջախների պատմության մեջ, այդ թվում և Կ. Պոլսի հայ հանրության նմանօրինակ ազգային կազմակերպությունների համեմատությամբ: Զմյուռնահայ գաղթօջախի, ասենք՝ Էգեյանի հայկական բոլոր համայնքների լուսավորական շարժման մեջ այն առանձնանում է իր մտավոր նշանակությամբ և 1840-ականին թանզիմաթի տրամաբանությամբ ընթացող տեղաշարժերով: Թանզիմաթի հռչակումը (1839) զարգացման բավարար հնարավորություններ ստեղծեց հատկապես օսմանյան մեծ քաղաքների ոչ մահմեդական համայնքների համար՝ որոշ չափով ազատականացնելու ազգային մարմինների կազմն ու գործունեության բովանդակությունը: Այս պայմաններում լուսավորության խնդիրը վերածվում էր ժողովրդական գործի, որ պետք է դուրս բերվեր վերնախավերի ա-

վանդական տնօրինությունից և որում հաշվի պետք է առնվեին հանրության մյուս խավերի և, ամենից առաջ, փոփոխությունների պատրաստ միջին խավերի՝ արհեստավորության ու առևտրականության պահանջները:

Զմյուռնիայում հանրային հակասությունները, հատկապես դպրոցի և լուսավորության ասպարեզում, հեռու էին այնպիսի լարվածությունից, ինչպիսին տեսնում ենք Կ. Պոլսի գաղթօջախում: Ընդհակառակն, ազդեցիկ դրամատերերի կրթված և լուսամիտ մի խումբ ինքն էր Զմյուռնիայում և Էգեյանի առափնյակի մյուս գաղթօջախներում դպրոցներ հիմնում՝ գործունեության ասպարեզ տրամադրելով մտավորականությանը: Այս յուրահատուկ գործակցությունն իր արդյունավետության բարձր աստիճանին հասավ «Սյունյաց ընկերության» մեջ նրանց համատեղ ջանքերի շնորհիվ: Ընկերությունը հիմնվեց 1841 թ. հունիսին, մեկենասները զմյուռնացի հայ վաճառականների եռյակն էր՝ Պետրոս Յուսուֆյանը (ոչ առանց իր եղբոր՝ եգիպտական պետական գործիչ Պողոս Յուսուֆյանի աջակցության), Աբրահամ Ապրոյանը՝ նշանավոր Ապրոյանների տոհմից, Գրիգոր Աբելյան-Գուլասպյանցը (երեքն էլ տրիեստաբնակ), զմյուռնացի Հակոբ Սարգսյանը (Վիեննայից) և Տատյանները (Կ. Պոլսից): Ընկերությանը բաժանորդագրվել էին բազմաթիվ վաճառականներ Ռուսաստանից, Բոմբեյից, Բաղդադից և այլ վայրերից[1]:

«Սյունյաց ընկերության» կազմակերպման մասին «Արշալոյս Արարատեան» լրագիրը գրում էր. «Այս ընկերութեան անունը Սիւնեաց դնել արժան դատեցաւ ի յիշատակ այն երևելի դպրատուննե-

[1] «Արշալոյս Արարատեան», Զմյուռնիա, 1841, հունիսի 13, նոյեմբերի 7:

ռաց, որոնք մեր սուրբ թարգմանիչներուն՝ Սահակայ եւ Մեսրովպայ ժամանակը Սիւնեաց նահանգին մէջը շինուելով՝ հետզհետէ ծաղկեցան, մանաւանդ ութերորդ դարուն մէջ մեծ համբաւ ստացան: Սիւնեաց ընկերութեան հիմնադիր և պաշտպանները Թրեստու մեծապատիւ եւ ազգասեր աղաները ըլլալով... այս անգամ յիշեալ աղաներին յատուկ խնդրանոքը Ղուկաս Գ. Պալդազարեանը գլխաւոր վերատեսուչ ընտրուեցաւ»[2]:

Ընկերության նպատակն էր «Հայոց ազգին ուսումնական ու բարոյական յառաջադիմութեանը օգնել ըստ կարի»: Այն կազմված էր տասն անդամներից՝ Ստ. Պալասամյան, Հ. Էքիզյան, Հ. Նուպարյան, Ղ. Պալդազարյան, Ռ. Ա. Փափազյան և ուրիշներ՝ հիմնականում մտավորականներ: Ընկերության անդամները պետք է վճարեին 50 օսմանյան ղուրուշ՝ բավական մատչելի մի գումար: Կարող էին անդամագրվել նաև օտարազգի մարդասեր անձինք: Կանոնադրությամբ նախատեսվում էր տարեկան մեկ անգամ հրապարակել նրա հաշվետվությունը՝ եկամուտների ու ծախքերի վերաբերյալ՝ գործունեության փաստական հղումներով[3]:

Մատենադարանում պահվող բազմաթիվ նյութերից և ժամանակի հայ մամուլի հրապարակումներից պարզվում է, որ ընկերությունը եռանդուն գործունեություն է ծավալել ոչ միայն Զմյուռնիայի, այլև Էգեյանի մյուս գաղթօջախների՝ Մանիսայի, Աքիսարի,

---

[2] Նույն տեղում, 1843, հունիսի 13:

[3] Ընկերության երկրորդ Կանոնադրության մեջ առավել որոշակի են շարադրված նրա նպատակներն ու գործունեության ընդլայնման միտումները, որոնք վկայում էին նրա համազգային մտահոգացումների մասին: Զմյուռնիայի վարժարանները բարեկարգելուց բացի, ենթադրվում էր, որ ընկերության ուժերով «Հետզհետէ հոգ պիտի տարուի խեղճ հայազգի գտնուած ուրիշ ամեն քաղաքներ ալ դպրատուններ հաստատել ու անոնց բարեկարգութեանցը ու յառաջադիմութեանցը խնամ տանիլ՝ վարժապետներ կարգելով հայերէնի գիտութեանց ու օտար լեզուներու համար» (նույն տողում, 1844, 24 հունիսի):

Էոդեմիշի, Բայանդըրի, Այդընի, Մենեմենի և շրջակա այլ բնակավայրերի հայերի դպրոցաշինության և կրթության ասպարեզում՝ հիմնելով դպրոցներ, վճարելով ուսուցիչների աշխատավարձերը, հոգալով ուսման ու կրթության հետ կապվող ծախսերը և այլն: «Սյունյացն» անգամ գործում էր թեմի սահմաններից դուրս՝ վարժարան հիմնելով Չանաքկալեում (Գելիբոլու), Բուլղարիայում (Վառնա): Պետք է նկատել, որ ընկերությունը չի ունեցել սոցիալ-հասարակական հատուկ ուղղվածություն, այն լուսավորական նպատակներ ունեցող կազմակերպություն էր, որի գործունեության հաջողությամբ շահագրգռված էին նրա բոլոր անդամները՝ անկախ իրենց սոցիալական պատկանելությունից: Ինչ վերաբերում է զմյուռնահայ դրամատերերի նախանձախնդրությանը՝ ի նպաստ ընկերության կազմակերպման ու գործունեության, ապա այդ ավանդական իրողություն էր առհասարակ հայ գաղթօջախներում, որտեղ բարեգործական կամ ազգանպաստ գործողությունների մեջ դրսևորվում էր ազգային հնամենի արմատներ ունեցող բարոյականությունը: Զմյուռնիայի հայ գաղթօջախի դարավոր պատմությունը վկայում է այդպիսի բարեգործության բազմաթիվ օրինակներ՝ սկսած Ապրոյաններից, Եսայաններից, Էքիզյաններից մինչև Հ. Սարգսյան, Յուսուֆյաններ, Սպարթալյաններ և այլք:

Կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն գրած իր նամակում ընկերության հիմնադիր անդամներից Գր. Մարկոսյանը բացատրում էր, որ դրա նպատակը ազգակից երեխաների անվճար ուսուցումն է, ինչպես և «յուսմունս այլեւայլ լեզուաց եւ պէսպէս կենցաղօգուտ գիտութեանց եւ արուեստից»: «Սյունյաց ընկերությունը», հարում է նա, ստանձնել է նաև մերձակա բնակավայրերի որբ և աղքատ պատանիների կրթության, դրա հետ միասին պարենի, հագուստի և

օթևանելու հոգսը, ինչպես և փոքրասիական քաղաքներում դպրոցներ բանալու գործը: Ընկերությանը նյութական աջակցություն են ցուցաբերել Լազարյանները՝ տրամադրելով 10 հազ. ղուրուշ, ինչպես և օտարազգի շատ վաճառականներ, իսկ նրա տարեկան եկամուտները հասնում էին բավական պատկառելի գումարի՝ 40 հազ. ղուրուշի: Գր. Մարկոսյանը խնդրում էր կաթողիկոսի հովանավորությունը՝ ուշագրավ հիմնավորմամբ. «Թոյլ տուր մեզ,- գրում է նա,- դնել զվէհ անուն Սրբազնակատար Հորդ ի գլուխ ընկերութեան Սիւնեաց, կոչելով զքեզ պաշտպան այդմ, որով... անվտանգ մնասցէ ընկերութիւնն մեր ի չարութենէ ոմանց հոգևորականաց մերոց, որք շարժեալ ի վարդապետական փառասիրութենէ և յուսումնատեցութենէ՝ անօգուտ ջանային ի միմեանց տապալել ընկերութիւն մեր ոչ երկար ժամանակ առաջ»[4]:

Դրանից 15 տարի անց, բայց Գր. Մարկոսյանին ու նրա տագնապներին ժամանակակից Ստ. Ոսկանյանը՝ մեծանուն մտածողն ու հրապարակագիրը, գրում էր, որ «Սյունյաց ընկերության» կործանման պատճառը հոգևորականության թշնամանքն էր[5]: Կնշանակի, հետադիմությունն ընկերության դեմ բացահայտ պայքար է մղել նրա գործունեության վերելքի շրջանում՝ 1843–1844 թթ., և միայն նրա զորեղ հովանավորներն են զսպել այդ ճնշումները, թեև ընկերության հակառակորդները հաջողել էին ինչ-որ չափով կաշկանդել նրանց: Հակառակ դեպքում Գր. Մարկոսյանը չէր հայցի Ներսես Աշտարակեցու բարձր հովանավորությունը:

Հայտնի չէ, թե ինչ պատասխանեց կաթողիկոսը վերոհիշյալ նամակին, բայց և հայտնի է, որ նա կհայտնվեր բավական փափուկ

---

[4] Մաշտոցյան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 110, վավ. 100:
[5] Արևմուտք, Փարիզ, 1859, թիվ 2, էջ 11:

դրության մեջ՝ «Սյունյաց ընկերության գլխի (կամ հովանավորի) պարտականությունները ստանձնելու դեպքում: Ասենք, որ 1825 թ. ի վեր Էջմիածինը կորցրել էր իր տերունի թեմերն Օսմանյան Թուրքիայում և դադարել Կ. Պոլսի հայոց պատրիարքության հետ գործնական որևէ փոխհարաբերություն ունենալուց, իսկ 1828 թվականից կաթողիկոսի անունը չէր հիշատակվում, քաղաքական հարաբերությունների նույն տրամաբանությամբ, այդ կայսրության հայոց եկեղեցիներում: Միայն 1844 թ. սեպտեմբերի 14-ին Կ. Պոլսի պատրիարք Մատթեոսի գումարած ազգային վարչության ժողովի որոշմամբ այդ մոռացությունը վերացվեց՝ առանց, սակայն, Էջմիածնի նվիրական և առաջնորդական իրավունքի վերականգնման[6]: Այս պայմաններում հազիվ թե կաթողիկոսը համաձայներ իր անունն առնչել ընկերության հետ,որը գործում էր Օսմանյան կայսրության տարածքում՝ Էջմիածնի նախկին տերունի թեմում: Համենայն դեպս, Ներսես Աշտարակեցու անունը, որպես «Սյունյաց ընկերության» պաշտոնական հովանավորի, որևէ տեղ չի արձանագրված: Վերադառնալով ընկերության հակառակորդներին, ովքեր շարժվում էին, ըստ Գր. Մարկոսյանի, «ի վարդապետական փառասիրութենէ», նկատենք, որ նրանց մի հայտնի չափով զսպում էր, նաև երկրում ծայր առած թանզիմաթի բարեփոխումների տրամաբանությունը: Այստեղ թռուցիկ հիշենք, որ 1839–1845 թթ. Օսմանյան Թուրքիայում բավական հուսադրող փորձեր արվեցին աշխարհիկհանրակրթական դպրոցներ ստեղծելու ուղղությամբ, իսկ 1846 թ. բարեփոխմամբ թուրքական դպրոցները դուրս էին բերվում մահմեդական կրոնագետների իրավասությունից և հանձնվում պե-

---

[6] **Հրանտ Ասատուր,** *Կոստանդնուպոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, Ստանպուլ,* հրատ.՝ Պատրիարքութիւն Հայոց, 2011, էջ 184–185:

տության տնօրինությանը՝ կազմակերպելու աշխարհիկ միջնակարգ դպրոցներ[7]: Սակայն կայսրության հպատակ փոքրամասնությունների դպրոցները, այդ թվում և հայերինը, ընդհուպ մինչև թանզիմաթ և դրանից հետո էլ տասնամյակներով առաջ էին թուրքական դպրոցներից՝ իրենց կրթական մակարդակով և իմացական բովանդակությամբ: Դպրոցի և դպրոցական գործի աշխարհականացումը հայության միջավայրում սկսվել էր թանզիմաթից դեռևս շատ առաջ: Մկրտիչ Նուպարյանը դեռևս 1831 թ. Զմյուռնիայում Ռ. Փափազյանին վարժարան՝ աշխատանքի հրավիրելիս, հայտնում էր, որ տեղի վարժարանը դուրս է բերված հոգևորականության ղեկավարումից և հանձնված աշխարհիկ մտավորականությանը[8]: «Սյունյաց ընկերության» հակառակորդների ջանքերը, կարելի է կարծել, պայմանավորված էին դպրոցական գործում այդպիսի ղեկավարումը վերադարձնելու մեծ ցանկությամբ: 1841–1845 թթ. ընկերությունը գրեթե ամբողջովին իր ձեռքն էր վերցրել զմյուռնահայ վարժարանների նյութական ծախսերի ապահովման և կառավարման պարտականությունը: Նա վճարում էր դպրոցների (արական և իգական) ուսուցիչների մեծ մասի աշխատավարձը, դասատվությունը հագեցնում ուսումնական անհրաժեշտ, անգամ շատ թանկ առարկաներով, ըստ հարկին դրանք գնելով Եվրոպայում: 1843 թ. ընկերությունը ֆիզիկայի դասերն ապահովել էր Վիեննայում գնված անհրաժեշտ գործիքներով ցուցադրանյութերով: Նրա գործունությանը շարունակում էր մեծապես աջակցել Պողոս Յուսուֆյանը՝ աշխատավարձ

---

[7] **Желтяков А.Д., Петросян Ю.А.** *История просвещения в Турции,* М., «Наука», 1965, с. 13–14, 23.

[8] «Պոլսոյ եւ Իզմիրի մէջ,- ասում է Մ. Նուպարյանը,- յայսմ մասին մեծ տարբերութիւն կայ, եւ թէ դպրատունը բնաւ եկեղեցական իշխանութենէ կախում չունի» («Արշալոյս», Զմիւռնիա, 1907, 30 նոյեմբերի):

սահմանելով անգլերենի ուսուցման համար և, միաժամանակ, 15 բաժին անդամագրվելով ընկերությանը: Իսկ նրա եղբայր Պետրոս Յուսուֆյանը «շատ ատենէ ի վեր գաղղիական լեզուի դասատուութիւնը հաստատած է վարժարանի մէջ», ինչպես հայտնում է այդ օրերի զմյուռնահայ լրագիրը[9]: Ս. Մեսրոպյան դպրոցին նա կտակել էր 20 հազար ավստրիական ֆիորին, աղջիկների Սարգսյան վարժարանին և տեղի ազգային հիվանդանոցին՝ 10 հազարական (440 հազար ղուրուշ)[10]:

Պետք է նկատել, որ ընկերության շնորհիվ Ս. Մեսրոպյան դպրոցում ժամանակի պահանջները բավարարող մակարդակի հասավ բնագիտական և մաթեմատիկական առարկաների ուսուցումը, որ մինչ այդ զիջում էր լեզուների և պատմության դասերի որակներին: Ընկերությունը հաստատել էր երկրաչափության, հանրահաշվի և ֆիզիկայի դասեր՝ ավելացնելով նաև աշխարհագրությունը: Ինչ վերաբերում է լեզուներին, ապա արական վարժարանում, տեսուչ Ռ.Ա. Փափազյանի ջանքերով ու խրախույսներով, 1840-ական թթ. ուսուցանվում էին վեց լեզուներ՝ հայերեն, հունարեն, թուրքերեն, իտալերեն, ֆրանսերեն և անգլերեն[11], որ բացառիկ երևույթ էր հայ դպրոցի պատմության մեջ:

Չպետք է անգիտանալ, որ բարեսիրական ու կրթական ընկերություններ հայտնվեցին, դպրոցաշինական իրենց ծրագրերով,

---

[9] «Արշալոյս Արարատեան», 1842, հունիսի 19:

[10] Նույն տեղում, 1846, օգոստոսի 23:

[11] Նույն տեղում, 1842, փետրվարի 6, ապրիլի 10: «Սյունյաց» ընկերության գործունեության այս շրջանում Ս. Մեսրոպյանի տարեկան քննություններին, իբրև պատվավոր հրավիրյալներ, ներկա էին լինում քաղաքի այլ դավանությունների մարդիկ: 1843 թ. մարտին դպրոցում այդպիսի պատվավոր հյուր էր Զմյուռնիայի լատինացիների առաջնորդ արքեպ. Մուսաբինին, ով գրքեր է ընծայել իտալերենի և հունարենի մրցանակաբաշխության մեջ աչքի ընկած աշակերտներին (տե՛ս «Արշալոյս Արարատեան», 1843, փետրվարի 12):

նաև քաղաքի այլ հանրություններում: Քաղաքի հունական համայնքը ևս ապրում էր լուսավորական տպավորիչ առաջընթաց: 1841 թ., «Սյունյացին» համընթաց, Զմյուռնիայի հույները կազմել էին կրթական-լուսավորական «Մուսիոն» ընկերությունը՝ նախատեսված կրթական որոշ մակարդակ ունեցող անձանց համար, որը բանախոսություններ էր կազմակերպում արվեստագիտական և գիտական թեմաներով[12]: Չպետք է անգիտանալ նաև քաղաքի եվրոպական դպրոցների բարերար ազդեցությունը տեղի մյուս համայնքների լուսավորական մղումների վրա: 1840-ական թթ. Զմյուռնիայում հատկապես աչքի էր ընկնում լեզուների, բնագիտության և արվեստների ուսուցմամբ Ռեֆորցոյի ֆրանսիական դպրոցը՝ լեվանտական քաղաքային կյանքի լեզվական կողմնորոշմամբ, այդ թվում և հայերենի ու հունարենի դասերով[13]:

Զմյուռնահայ ամբողջ համայնքին, նրա լուսավորական-կրթական հաստատություններին ու հանրային կազմակերպություններին ծանրագույն հարվածներ հասցրեց 1845 թ. հունիսի 21-ի մեծ հրդեհը: Չխորանալով մանրամասների մեջ, նկատենք, որ Հայոց թաղում այրվել էին հարյուրավոր շինություններ, խանութներ, պահեստներ, դպրոցական և մշակութային հաստատություններ, եկեղեցիներ և այլն: Հրդեհից մեծապես տուժել էին նաև քաղաքի մյուս համայնքները: Ամբողջ քաղաքի կրած վնասները հաշվվում էին վիթխարի դրամական զանգվածով՝ 300 մլն ղուրուշ, որից ավելի քան 50 մլն կազմում էին հայերի կորուստները, և առաջիկայում երկար

[12] Նույն տեղում, 1841, ապրիլի 11:
[13] Նույն տեղում, 1845, սեպտեմբերի 21:

տարիներ էին պետք այդ ավերիչ հրդեհի հետևանքները վերացնելու համար[14]:

Հրդեհը անհատուցելի հարվածներ հասցրեց հայկական բոլոր ազգային կազմակերպություններին, նաև «Սյունյաց ընկերությանն» ու նրա ունևոր բազմաթիվ բաժանորդներին: Թուլացան ընկերության հնարավորություններն ու կորովը: Այսուհանդերձ, նա այս կամ այն կերպ շարունակում էր գործել հրդեհից հետո ևս, խնամել իր դպրոցները Մանիսայում, Մենեմենում և Աքիսարում[15], սակայն այդ նրա կարողության վերջին ցուցադրումներն էին: Այդ մասին է խոսում Կ. Պոլսի պատրիարք, արքեպ. Մատթեոսի կոնդակը (1846, նոյեմբերի 7) տկարացած ընկերությանը՝ քաջալերական հորդորներով[16]:

Այսպես, թե այնպես, ընկերությունն իր գործունեությունը պետք է որ դադարեցրած լինի 1849 թ. վերջերին՝ զուտ անվանապես գոր-

---

[14] Տե՛ս Ատոմ, Իզմիրի Ս. Լուսաւորչեան հիւանդանոցը եւ իր տեղեկագիրը («Արեւելք», 1902, ապրիլի 18/1 մայիսի: Զմյուռնահայերի օգտին շարունակական հանգանակություններ էին անում Կ. Պոլսի հայ համայնքը, Էջմիածինը, ազգային եկեղեցու բազմաթիվ թեմեր՝ Ռուսաստանում, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, Հնդկաստանում, Եվրոպայում և այլուր: Հրդեհից տուժած զմյուռնահայերի օգնության գործը վերածվեց համազգային համերաշխության երևույթի, որ շարունակվեց հաջորդ տասնամյակի ընթացքում:

[15] Տե՛ս «Արշալոյս Արարատեան», 1845, հոկտեմբերի 5:

[16] Նույն տեղում, 1846, նոյեմբերի 29: Դժվար է կարծել, որ Մատթեոս արքեպ.՝ 1844 թ. պատրիարք ընտրված և դրանից առաջ՝ Զմյուռնիայի առաջնորդը, ընկերության հակառակորդների շարքում եղած լինի, որ նրան է վերագրում Հ. Քոսյանը՝ գրելով, թե նա «ինչ-ինչ կրօնական խնդիրներ յարուցանելով՝ արդեն վերջին ժամանակներն իրարու հետ գժտեալ անդամներու սրտին մէջ պաղութիւն մը կը ձգէ, մի եւ նոյն ժամանակ (1845) աւերիչ հրդեհը վրայ գալով՝ անբուժելի եւ վերջնական հարուած մը կու տայ ընկերութեանս եւ կործանումը յառաջ կը բերէ» (**Քոսեան Յ.,** Հայք Ի Զմիւռնիա եւ ի շրջակայս, Վիեննա, 1899, հ. Ա, էջ 178): Ընդհակառակն, հենց Մատթեոս արք. առաջնորդության ժամանակ էր կազմակերպվել ու հաջողությամբ գործել «Սյունյաց ընկերությունը», ավելին, նա ջանքեր էր գործադրել ընկերության ղեկավարների մեջ հայտնված գժտությունները կասեցնելու համար և սիրո ու միաբանության էր հրավիրել նրանց, և հրդեհից մեկ տարի անց, ինչպես տեսանք, քաջալերական կոնդակ էր հղել ընկերությանը:

ծելով դրա նախորդող մեկ-երկու տարիներին և այս ընթացքում երբեմն-երբեմն կենդանության նշաններ ցույց տալով: Այսպես, կա ընկերության վերատեսչի և անդամների՝ 1848 թ. հունվարի 28-ի թվակիր վկայություն ստացականը, որտեղ նրանք հավաստում են, որ իրենք Աստվածատուր Ապրոյանից ստացել են ընկերությանը Ներսես կաթողիկոսի շնորհած 3000 ղուրուշը[17]: Նույն՝ 1849 թ. Ղ. Պալդազարյանը հրաժարվեց ընկերության խորհրդական-անդամությունից[18] և դրանով էլ ավարտվում է այս, իրոք, համազգային նշանակություն ունեցող բարեսիրական ընկերության պատմությունը: Այն հատկապես կարևոր նշանակություն ունեցավ հայկական հետագա ընկերությունների կազմակերպման ու գործունեության համար:

Այլ ընկերություններ

1842 թ., երբ ակնհայտ էր «Սյունյաց ընկերության» ոգևորիչ գործունեությունը զմյուռնահայ մտավոր կյանքում, հայտնվեց «Հայկազնյան» անվամբ մի նոր ընկերություն՝կազմված երիտասարդներից: Ընկերության նպատակն էր բարեգործական հիմունքներով «դպրոցական եւ բարոյական դասագիրքեր եւ վէպեր յօրինել կամ թարգմանել յօգուտ դպրոցի տղայոց, որչափ որ կը ներեր մեր պատանեկան հասակը եւ մտաւոր կարողութիւնը: Առաջինն էր ընկերութիւնս Իզմիրի մէջ, Սիւնեաց համբաւաւոր ընկերութենէն յետոյ կազմուած, թէեւ երկուքն ալ զոհ գնացին մեծ հրդեհին»[19]:

---

[17] Մաշտոցյան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 137, վավ. 45: Հ. Քոսյանը, այնուհետև նրան հետևող հեղինակները ընկերության գոյվելու տարին են համարում 1845-ը, բայց, ինչպես տեսանք, այն ավելի երկար է դիմակայել փորձություններին:

[18] Տե՛ս «Արշալոյս Արարատեան», 1849, թիւ 380:

[19] **Սաւալան Տ.,** Կենսագրական յուշեր Գահիրէ, 1900, էջ 29:

«Հայկազնեան ընկերության» հոգաբարձուն էր Տ. Սավալանյանը, անդամակցում էին Ա. Կ. Տետեյանը, Պ. Ալփիարյանը, Ա. Սուլթանյանցը և ուրիշներ[20]: Իր կարճատև գոյության ընթացքում ընկերությունը հասցրեց տպագրել Սավալանյանի թարգմանած՝ Շատոբրիանի «Աթալա»-ն (1842), ևս մեկ գրքույկ՝ «Հարիւր առակներ» վերնագրով[21]: Դրա գոյության հնարավորությունները վերացան մեծ հրդեհից հետո:

1843 թ. գաղթօջախում կազմակերպվեց «Արագածունյաց ընկերությունը»՝ այս անգամ զուտ տպագրական ուղղվածությամբ, որը ձեռք բերեց տպարան և, Խ. Մելիքսելումյանի խմբագրությամբ, սկսեց հրատարակել «Հայրենասէր» շաբաթաթերթը (1843–1846): Ընկերության անդամներն էին Խ. Մելիքսելումյանը, Գ. Խաչիկյանը, Պապոն և ուրիշներ[22]: Հրդեհից բացի, թերթի դադարի պատճառ դարձան նաև զմյուռնահայերի մրցակցական ոգին (տարաձայնությունները «Արշալոյս Արարատեանի» հետ) և դրա սնուցած երկպառակությունները ընկերության շուրջ: Գր. Գալեմքյարյանը նկատում է, որ ընկերությունը կործանվեց «հակառակորդաց հնարիւքն»[23]:

Եզրակացություն

1840-ական թթ. բարեսիրական կրթական ընկերությունները դպրոցն ու լուսավորությունը ազատականացնելու, հանրային մղումներն ու շահերը հաշվի առնող մտավոր շարժման արտահայտությունն էին զմյուռնահայ իրականության մեջ: Սակայն ընկերությունները, որպես հանրային գործունեության նոր ձև, պետք է սրեին

---

[20] «Արշալոյս Արարատեան», 1843, նոյեմբերի 12:
[21] **Սավալան Տ.,** նշվ. աշխ., էջ 29–30:
[22] «Աշխատանք», Զմյուռնիա, 1912, հուլիսի 4/27:
[23] **Գալէմքեարեան Գր.,** *Պատմութիւն հայ լրագրութեան*, Վիեննա, 1898, էջ 79:

տարբեր պատկերացումներն ու հակասությունները պահպանողական մտածողության և նորի ջատագով մտավորականության ու նրան համակիր վերնախավի միջև: Տարաձայնությունների ոլորտ ընդգրկվեցին նաև դպրոցական գործերի ղեկը դժկամությամբ զիջող հոգևորականության և աշխարհիկ ու հնին կառչած վերնախավի որոշ տարրերը: Այդպիսի տարաձայնությունները վերածվում էին գժտությունների համայնքի ներսում, ջլատում ընկերությունների գործունեությունը կամ հանրային անտարբերության դատապարտում դրանց: Այս ընկերությունների կարճակեցությունը մի հայտնի չափով պետք է բացատրել նաև 1845 թ. Զմյուռնիայի աղետալի հրդեհով, որը մեծապես անդրադարձավ գաղթօջախի նյութական հնարավորությունների վրա. այժմ բարեգործության էր կարոտ ամբողջ գաղթօջախը՝ իր սեփական բարոյական ու բարեսիրական մղումներով և հոգևոր ինքնությամբ հանդերձ:

SMYRNA ARMENIAN CHARITABLE AND EDUCATIONAL COMMUNITIES IN THE 40S OF 19TH CENTURY

KHARATYAN A.

Summary

Keywords: Smyrna, “Syunik”, Aegean coast, “Arshaluys Araradian” newspaper, Aproyan family, Triesian people, philanthropists, Yusufians.

In the history of Armenian charitable and educational societies, the “Sunyats Society” of the Armenians of Smyrna (1841–1849) is distinguished by its high level of organization and purposefulness. It

provided significant financial assistance to the Armenians living not only in Smyrna but also in other colonies of the Aegean coast establishing national schools and supporting their activities financially. The Society was financially supported by the brothers Poghos and Petros Yusufyans from Smyrna, the Lazarevs from Moscow, the Tatyans from Constantinople, rich people among the Armenians of India and elsewhere, etc.

In the first half of the 19th century, other charitable societies were also active in the Armenian colonies of Smyrna, but their scope of activity was much smaller than that of the "Syunyats Society".

АРМЯНСКИЕ БЛАГОТВОРИТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКИЕ ОБЩИНЫ СМИРНЫ В 40-Е ГОДЫ XIX ВЕКА

ХАРАТЯН А.

Резюме

Ключевые слова: Смирна, «Сюник», Эгейское побережье, «Аршалуйс Арарадян» газета, семья Апроянов, триесцы, благотворители, Юсуфийцы.

В истории армянских благотворительно-просветительских обществ своим высоким уровнем организованности и целенаправленности отличается «Общество Сюняц» смирнинских армян (1841–1849). Оно оказывало значительную материальную помощь армянам, проживающих не только в Смирне, но и в других

колониях Эгейского побережья, основывая национальные школы и материально обеспечивая их деятельность. Финансовую помощь Обществу оказывали братья Погос и Петрос Юсуфьяны родом из Смирны, Лазаревы из Москвы, Татьяны из Константинопля, состоятельные армяне из Индии и других стран и т.д.

В первой половине XIX века в смирнинских армянских колониях действовали и другие благотворительные общества, (однако масштаб их деятельности значительно уступал «Обществу Сюняц») гораздо в незначительных рамках деятельности, по сравнению с «Обществом Сюняц».